ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ
հա. ԵԴ2/38878/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ դատավոր՝ ***Արման Օհանյանի***
քարտուղարությամբ՝ ***Ռոզա Նազարյանի***
(գործին մասնակցող անձինք՝

հայցվոր՝ ***<<ՈՍՄԱՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն***
(այսուհետ նաև՝ Հայցվոր կամ <<ՈՍՄԱՐ>> ՍՊԸ)
(պետական գրանցման համար՝ 18.110.00511, ՀՎՀՀ՝ 09208107,
գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Գորիս, Երևանյան խճուղի 17, 17/1)

Հայցվորի ներկայացուցիչներ՝ ***Գարիկ Աշոտի Հակոբյան***
(անձնագիր՝ AL 0436148, տրված՝ 26.09.2023թ. 001-ի կողմից, <<ՈՍՄԱՐ>> ՍՊԸ տնօրեն,
ծանուցման հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Զ.Քանաքեռցու փողոց, շենք 125, բնակարան 1)
Մարինե Ռազմիկի Մխիթարյան
(անձնագիր՝ AV 0653861, տրված՝ 24.02.2023թ. 009-ի կողմից, լիազորագիր՝ տրված 14.11.2023թ. <<ՈՍՄԱՐ>> ՍՊԸ տնօրեն Գարիկ Հակոբյանի կողմից, փաստաբանական գործունեության արտոնագիր՝ թիվ 1865,
ծանուցման հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Զ.Քանաքեռցու փողոց, շենք 125, բնակարան 1)

պատասխանող՝ ***ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն***
(այսուհետ նաև՝ Պատասխանող)
(գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կառավարական տուն 3, էլ.փոստի հասցե՝
ani.badalyan@mta.gov.am)

Պատասխանողի ներկայացուցիչ՝ ***Սոնա Կարապետի Հայրապետյան***
(նույնականացման քարտ՝ 006273502, տրված 27.11.2017թ. 005-ի կողմից, լիազորագիր՝ տրված 23.03.2023թ. ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի կողմից,
ծանուցման հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կառավարական փուն 3)

վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝

<<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
(այսուհետ նաև՝ Երրորդ անձ կամ <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ)
(ծանուցման հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արաբկիր 39-րդ փողոց, 1/3,
էլ.փոստի հասցե՝ info@aab.am)

Երրորդ անձի ներկայացուցիչներ՝

Ալինա Սոսի Ռևազյան
(նույնականացման քարտ՝ 008823635, տրված 06.10.2017թ. 003-ի կողմից, լիազորագիր՝ տրված 12.12.2023թ. <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ տնօրեն Արմեն Բադալյանի կողմից,
ծանուցման հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արաբկիր 39-րդ փողոց, 1/3)

Պավել Դավիթի Թադևոսյան
(նույնականացման քարտ՝ 002565448, տրված 13.11.2015թ. 005-ի կողմից, լիազորագիր՝ տրված 16.01.2024թ. <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ տնօրեն Արմեն Բադալյանի կողմից,
ծանուցման հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արաբկիր 39-րդ փողոց, 1/3)

19.01.2024 թվականին ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով քաղաքացիական գործն ըստ հայցի <<ՈՍՄԱՐ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նկատակով կազմակերպված ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/41Շ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.11.2023 թվականի տեղի ունեցած նիստի արձանագրությամբ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/41Շ ծածկագրով գնման ընթացկարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

II
(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

1. ***<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>***

20.11.2023 թվականին <<ՈՍՄԱՐ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գարիկ Աշոտի Հակոբյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նկատակով կազմակերպված ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/41Շ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.11.2023 թվականի տեղի ունեցած նիստի

արձանագրությամբ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/41Շ ծածկագրով գնման ընթացկարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

21.11.2023 թվականին հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, հանձնվել է Դատարանի դատավոր Ա.Օհանյանին:

22.11.2023 թվականին Դատարանը <<Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և գործի քննությունը դատական նիստով իրականացնելու մասին>> որոշում է կայացրել:

Հայաստանի Հանրապետության (այսուհետ նաև՝ ՀՀ) քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125 հոդվածով և 27.2 գլխով սահմանված կարգով Դատարանը <<Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և գործի քննությունը դատական նիստով իրականացնելու մասին>> Դատարանի որոշումը և իրավունքների ու պարտականությունների պարզաբանմամբ գրությունները փոստային առաքմամբ ուղարկվել է դատավարության մասնակիցներին և վերջիններիս էլեկտրոնային փոստի հասցեներին:

04.12.2023 թվականին Դատարան է ներկայացվել Պատասխանողից պահանջված ապացույցները և Հայցադիմումի պատասխանը:

11.12.2023 թվականին Դատարան է ներկայացվել <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի տնօրենի՝ երրորդ անձ ներգրավելու մասին միջնորդությունը:

15.12.2023 թվականին Դատարանը <<Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ներգրավելու մասին>> որոշում է կայացրել:

15.01.2024 թվականին Դատարան ներկայացված <<Հայցից հրաժարվելու մասին>> դիմումով հայցվոր <<ՈՍՄԱՐ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Մարինե Ռազմիկի Մխիթարյանը հրաժարվել է ներկայացված հայցադիմումից՝ նշելով, որ հայցվորը տեղյակ է և գիտակցում է հայցից հրաժարվելու դատավարական հետևանքներ (այսուհետ նաև՝ Դիմում):

Միաժամանակ Դիմումով <<ՈՍՄԱՐ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Մարինե Ռազմիկի Մխիթարյանը խնդրել է հայցից հրաժարվելու դիմումը քննարկել պատշաճ ծանուցված և դատարան չներկայացած հայցվոր կողմի բացակայությամբ:

17.01.2024 թվականին դատական նիստը հայտարարվել է փակված և ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունու նստավայրում դատական ակտի հրապարակման օր է հայտարարվել 19.01.2024 թվականը, որը ենթակա է հրապարակման դատական իշխանության պաշտոնական՝ http://www.court.am (http://www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ) կայքէջի միջոցով:

III
(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

1. Դատարանի իրավական վերլուծությունները.

Դատարանը, ուսումնասիրելով գործի հանգամանքները և հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված՝ հայցից հրաժարվելու մասին դիմումը, գտավ.

*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով **հայցվորը (դիմողը) իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու իր պահանջի**ց, փոփոխելու հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը, պատասխանողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն ընդունելու հայցվորի պահանջը, կողմերը կարող են վեճը լուծել հաշտության **համաձայնությամբ,** սկսել արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց կամ գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ ***առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝ հայցվորը կամ դիմողը հրաժարվել է պահանջից****:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183 հոդվածի համաձայն՝

1. Գործի վարույթը կարճելու մասին առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում, բացառությամբ սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

(...):

3. Գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը:

4. Գործի վարույթը կարճելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե դրա դեմ վերաքննիչ բողոք չի բերվել:

5. Գործի վարույթը կարճելու մասին որոշումը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ առձեռն նրանց չի հանձնվել:

6. Գործին մասնակցող անձինք գործի վարույթը կարճելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող են բողոքարկել սույն օրենսգրքով սահմանված կարգով:

7. Գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացվելու դեպքում գործի վարույթը սկսվում է նորից, և գործի քննությունը հանձնվում է միևնույն դատարանի մեկ այլ դատավորի:

8. Գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան, բացառությամբ այն դեպքի, երբ սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով գործի վարույթը կարճելուց հետո դատարանը մերժել է արբիտրաժի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը:

9. Եթե հայցվորը դատական նիստից դուրս ներկայացնում է պահանջներից հրաժարվելու մասին գրավոր միջնորդություն, ապա առաջին ատյանի դատարանը միջնորդությունն ստանալու պահից տասնօրյա ժամկետում հրավիրում է դատական նիստ՝ պահանջներից հրաժարվելու մասին միջնորդությունը և դատական ծախսերի բաշխման հարցերը քննելու նպատակով: Եթե հայցվորը նիստի ժամանակ պնդում է պահանջներից հրաժարվելու իր միջնորդությունը կամ պատշաճ տեղեկացված լինելու պայմաններում չի ներկայանում դատական նիստին, ապա առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում գործի վարույթը կարճելու մասին:

Տվյալ դեպքում, հայցվոր <<ՈՍՄԱՐ>> ՍՊԸի ներկայացուցիչ Մարինե Ռազմիկի Մխիթարյանը դատարան է ներկայացրել դիմում, որով հրաժարվել է հայցից, այսինքն՝ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված հիմքը, հետևաբար դատարանը գործի ըստ էության քննություն չի կատարում, քանի որ ըստ հայցի <<ՈՍՄԱՐ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նկատակով կազմակերպված ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/41Շ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.11.2023 թվականի տեղի ունեցած նիստի արձանագրությամբ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/41Շ ծածկագրով գնման ընթացկարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հա. ԵԴ2/38878/02/23 քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման:

2. <u>Դատական ծախսերի մասով.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝

*1. Հայցն առանց քննության թողնելու կամ **գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա**, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:*

2. Գործի քննության ընթացքում պատասխանողի կողմից հայցապահանջները կամավոր կատարելու հետևանքով գործի վարույթը կարճվելու դեպքում դատարանը դատական ծախսերի հատուցման պարտականությունը դնում է պատասխանողի վրա:

Դատարանն արձանագրում է, որ ներկայացված հայցադիմումի համար Հայցվորի կողմից վճարվել է օրենքով սահմանված չափին համապատասխան պետական տուրք:

Նկատի ունենալով, որ հայցվորի՝ հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը ենթակա է կարճման, հետևաբար Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ գործի քննությամբ այլ ծախսեր չեն առաջացել, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով ևս պետք է համարել լուծված:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182, 183, 110, 191 և 192 հոդվածներով՝ դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ըստ հայցի <<ՈՍՄԱՐ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նկատակով կազմակերպված ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/41Շ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.11.2023 թվականի տեղի ունեցած նիստի արձանագրությամբ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2023/41Շ ծածկագրով գնման ընթացկարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հա. ԵԴ2/38878/02/23 քաղաքացիական գործի վարույթը կարճել՝ հայցվորի կողմից պահանջից հրաժարվելու հիմքով:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

5. Որոշումը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192 Date: 2024.01.19 11:43:58 AMT **Ա. ՕՀԱՆՅԱՆ**